

**Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021- 2026 թթ.) 2025 թվականի կատարման ընթացքի և արդյունքների ջրային տնտեսություն բաժնի գեկույցը (ՀՀ կառավարության 2026 թվականի փետրվարի 26-ի N 226-Ա որոշմամբ հաստատված)**

2025 թվականին խմելու ջրի կորուստները կազմել են 59,1%՝ 2024 թվականի 61%-ի, 2023 թվականի 63,1%-ի, 2022 թվականի 65,3%-ի և 2021 թվականի 73,7%-ի համեմատ: 2017 թվականին խմելու ջրի կորուստները կազմել են 81,1%:

Մատակարարված ոռոգման ջրի կորուստները 2025 թվականին կազմել են 44,5%՝ 2024 թվականի 45,5%-ի, 2023 թվականի 44,9%-ի, 2022 թվականի 46,4%-ի և 2021 թվականի 46,2%-ի համեմատ: 2017 թվականին ոռոգման ջրի կորուստները կազմել են 45,2%:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ջրամատակարարման շարունակականությունը կազմել է Երևան քաղաքում՝ 23,1ժամ/օր, այլ քաղաքային բնակավայրերում՝ 20,7ժամ/օր, իսկ գյուղական բնակավայրերում՝ 20,4ժամ/օր:

Ջրի որակը կազմել է 98,56%՝ 2024 թվականի 98,54%-ի համեմատ:

2025 թվականին կազմակերպվել է խմելու ջրի մատակարարման 13 ենթածրագրի շինարարական աշխատանքների ձեռքբերում՝ 3,1 մլրդ ՀՀ դրամ արժեքով, որոնցից 10-ը՝ Երևան քաղաքում, իսկ 3-ը՝ Արմավիրի, Արագածոտնի և Լոռու մարզերում:

Շարունակվել են KFW-ի, ԵՆԲ-ի և ԵՄ-ի ֆինանսավորմամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման աշխատանքները՝ ՀՀ 7 մարզերի 63 բնակավայրերում: Կապիտալ ներդրումները 2025 թվականին կազմել են շուրջ 3,5 մլրդ ՀՀ դրամ:

Շարունակվել են ՎՋԵԲ, ԵՆԲ, ԵՄ և Կառավարության համաֆինանսավորմամբ Երևան քաղաքի Հաղթանակ, Սիլիկյան և Նոր Խարբերդ թաղամասերում և Արարատի մարզի Նոր Խարբերդ բնակավայրում ջրամատակարարման համակարգերի արդիականացման աշխատանքները: Կապիտալ ներդրումները 2025 թվականին կազմել են 992,2 մլն ՀՀ դրամ:

ԶՖԳ և Կառավարության համաֆինանսավորմամբ իրականացվող Վեդիի ջրամբարի և ոռոգման համակարգի ծրագրով ավարտվել են Վեդիի ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների կառուցման ֆիզիկական աշխատանքները: Այս մասով ներդրումների ընդհանուր ծավալը 2025 թվականին կազմել է մոտ 4 մլրդ ՀՀ դրամ:

Շարունակվել են Կապսի ջրամբարի և օժանդակ կառուցվածքների կառուցման աշխատանքները:

5 ջրամբարի (Աստղածորի, Ելփինի, Քասախի, Լիճքի և Արթիկի) կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերը պատրաստ են, հաստատվել են, և ջրամբարների կառուցման վարկավորման հայտը ներկայացվել է ծրագրի դոնոր Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկին:

2025 թվականին օրվա կարգավորման 14 ջրավազանից 5-ի շինարարական աշխատանքները մեկնարկել են և գտնվում են ավարտական փուլում, իսկ ևս 2-ի մրցութային գործընթացներն ավարտվել են, և կնքվել են շինարարական աշխատանքների պայմանագրեր:

2025 թվականին իրականացվել է ոռոգման 15 օբյեկտի հիմնանորոգում, որոնցից 11-ի շինարարությունն ավարտվել է, իսկ մնացած 4-ինը կավարտվի 2026 թվականին: Արդյունքում, կբարելավվի մոտ 4 500 հա ոռոգելի հողատարածքների ջրապահովվածության մակարդակը, ինչպես նաև լրացուցիչ մոտ 900 հա հողատարածքներ կդառնան ոռոգելի:

Հիմնանորոգված ոռոգման համակարգերում կորուստները կնվազեն 15-20%-ով:

Կատարվել են շուրջ 219,2 կմ ընդհանուր երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցի մաքրման, վերականգնման և նորոգման աշխատանքներ: Կանխվել է շուրջ 7 000 հա հողատարածքների աղակալումը: Կատարվել են Դեբեդի, Փամբակի, Ձորագետի, Շնողի և Տաշիրի 13 խնդրահարույց տեղամասերում շուրջ 184 հազար մ<sup>3</sup> ծավալով մաքրման՝ հակահեղեղային միջոցառումներ:

2025 թվականին ավարտվել են Արփա-Սևան թիվ 2 թունելի 244,7 մ առավել վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքները: «Որոտան-Արփա-Սևան ջրային համակարգի շահագործում և պահպանում» ծրագրի շրջանակներում 2025 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը Սևանա լիճ տեղափոխվել է շուրջ 120,1 մլն մ<sup>3</sup> ջուր: